կարևոր ասպեկտները էքզիստենցիալ փիլիսոփայության հնարավոր սոցիոլոգիական ելքերով, հասարակության գլոբալ կայունության ապահովման, բացահայտելով դրանցում անխուսափելի սոցիալական բախումների և հասարակական-քաղաքական հեղափոխությունների տեղակայման կարևորությունը:

Բանալի բառեր՝ սոցիոլոգիզմ, էկզիստենցիալիզմ, սոցիալական բարոյականություն, էվոլյուցիոն զարգացում:

SOME ASPECTS OF E. TIRIAKYAN'S EXISTENTIAL SOCIOLOGY

Anahit Jijyan
Candidate of Philosophical Sciences, Associate Professor,
Scientific Secretary of the Institute of Philosophy,
Sociology and Law NAS RA,
Lecturer at the Chair of Sociology and Social Work
Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan

SUMMARY

The work of Edward Tiriakyan "Existentialism and Sociologism" is undoubtedly useful as a source of ideas that will deepen our understanding of important aspects of the sociological teachings of Durkheim with possible sociological outputs of existential philosophy, the problems of ensuring global stability of society, regulating the inevitable social conflicts and the place of social and political revolutions in them.

Keywords: sociologism, existentialism, social morality, evolutionary development.

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕՏԱՐՈՒՄՆ ԻՐԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՌԵԶԱ ԷՄԱՄԻ
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

Պատմության վայրիվերումներով լի շարժընթացում մարդիկ միշտ էլ հասարակական բազմաթիվ խնդիրների ու վնասների պատճառով տառապանքներ են կրել և մշտապես որոնել դրանց արմատները,

կանխարգելման ու կասեցման ուղիները[1]: Ամենուր և բոլոր ժամանակներում մենք առնչվում ենք սոցիալական խնդիրներին, ինչպես օրինակ՝ շրջակա միջավայրի աղտոտվածություն, ոճրագործություններ, հանցագործություններ, խտրականություն, թմրամոլություն, ինֆլյացիա, ինքնասպանություն և այլն: Արդի հասարակարգերում ծառացած խնդիրներից մեկն էլ օտարումն է սեփական ինքնությունից՝ ինքնօտարումը[2]:

Նոր ժամանակներում արդիական հասարակության ձևավորումը, հատկապես, քաղաքների ընդլայնումն, առաջ են բերել սոցիալական կառուցվածքի և միջանձնային փոխհարաբերությունների էական կերպարանափոխումներ, որոնք ներգործել են անհատական և հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտների վրա: Մերօրյա աշխարհում մարդկանց փոխհարաբերությունները գնալով ավելի են բարդանում[3]: Ինդուստրիալ քաղաքակրթությունն իր հետ բերել է արդյունաբերական քաղաքների ընդլայնում, խիտ բնակեցված թաղամասերի գոյացում, անցյալի պարզ ապրելաձևից դեպի շքեղ ապրելակերպի անցում, պաշտոնական ու սառը հարաբերությունների գերակայություն, և այս բոլորը զուգակցվում են բացարձակ եսակենտրոնության, կոշտ մրցակցության, ռացիոնալիզմի, հին ու նոր ավանդույթների բախման, սոցիալական միասնության խախտման, հոգեկան թաքնված բարդույթների, չիրագործված երազանքների, անզորության և իրավազրկվածության զգացումի հետ[4]: Այսպիսի պայմաններում զարգացող երկրների ամենակարևոր հարցերից մեկը երիտասարդների օտարումն է և նրանց հիասթափությունը սոցիալական միջավայրից:

«Օտարում» հասկացությունն իր լայն իմաստով վաղեմի գործածություն ունի փիլիսոփայական ու հասարակագիտական մտքի

---

[1] **Սոթուդեհ Հ.,** Սոցիալական պաթոլոգիա. Շեղումների սոցիոլոգիա, «Ավա-ե նուր» հրատարակչություն, 6-րդ հրատարակություն, Թեհրան, 2005, էջ 11:

[2]**Պողոսյան Գ., Հարությունյան Մ., Առաքելյան Վ.,** Հայաստան. օտարացած հասարակություն, Եր., , «Լուսաբաց», 2007, 169 էջ:

[3]**Հարությունյան Է.** Անցումնային հասարակությունը որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ, Եր., , ԵՊՀ հրատ., 2000:

[4]**Ֆաթհի Ս. և Մոհամմադի Հ.,** Ուրբանիզացիայի ռեսուրսները և երիտասարդների սոցիալական օտարումը և վանդալիստական վարքագծերը, Սոցիալական հետազոտությունների հանդես, 4-րդ տարի, 13-րդ համար, Թեհրան, 2011թ., էջ 158:

պատմության մեջ[5]: Սոցիոլոգներն ու հոգեբաններն այն կիրառում են հասարակական որոշակի գործընթացների, միջավայրում տեղի ունեցող իրադարձությունների, հոգեբանական ճնշումների և արտաքին հարկադրանքների բնութագրման համար, ինչպես նաև անհատի օտարացումը հասարակության արժեհամակարգից, հավատալիք-ներից, նորմերից և մշակութային նպատակներից սահմանելու համար: «Նկատի առնելով այս եզրույթի կարևորությունը և նրան տրված սահմանումների բազմազանությունը՝ Ռեյմոնդ Վիլիամզը 1976թ.-ին նշում էր, որ լեզուների բառարաններում «Օտարում» եզրույթը համարվում է ամենաբարդ և խրթին բառերից մեկը: Այս բառի վերաբերյալ տարբեր երկրներում լայն քննարկումներ են ծավալվել տարբեր ոլորտների մասնագետների կողմից, ինչպես նաև կատարվել՝ մեծ թվով հետազոտություններ և ուսումնասիրություններ: Սոցիոլո-գները, հոգեբանները, քաղաքագետները և հասարակական կյանքի պլանավորողներն իրենց վերլուծություններում այս տերմինն օգտագործում են՝ միջավայրում տեղի ունեցող մի շարք գործընթացներին և իրողություններին, հոգեբանական ճնշումներին և սոցիալական պարտադրանքներին անդրադառնալիս»[6]:

Այսպիսով, սոցիալական օտարման հիմնախնդրի ուսումնա-սիրությունը ներկայումս քննվում է տարբեր ոլորտների մասնագետ-ների կողմից, և բազմաթիվ հետազոտողներ փորձում են վեր հանել դրա նշանակությունն ու էությունը[7]: Այդուհանդերձ, Իրանի և Հայաստանի բնակչության մեջ երիտասարդների մեծ քանակը և երկու հասարակարգերի յուրահատկություններն ու զարգացումներն անհրաժեշտ են դարձնում նոր ուսումնասիրություններ, որպեսզի հինախնդիրը դիտարկվի տարբեր տեսանկյուններից ու կողմերից և բացահայտվի հարցի չպարզաբանված շերտերն ու պատճառները: Մեր հետազոտության շրջանակում փորձ ենք արել համեմատական վերլուծությամբ լուսաբանել երկու երկրների՝ Իրանի և Հայաստանի երիտասարդների շրջանում օտարման պատճառներն ու գործոնները,

---

[5]**Հարությունյան Մ.**, Արդի հայ հասարակությունը եվ օտարված գիտակցության փիլիսոփայությունը, Եր., , «Նաիրի», 2014, 648 էջ:

[6] **Մոհսենի Թաբրիզի Ա.,** Օտարում, Սոցիոլոգիական գիտությունների հանդես, 2-րդ հատոր, թիվ 2, Թեհրան, 1991թ., էջ 26:

[7]**Պողոսյան Գ., Հարությունյան Մ., Առաքելյան Վ.,** Հայաստան. օտարացած հասարակություն, Եր., , «Լուսաբաց», 2007, 169 էջ:

որոշակիացնել երկու երկրների երիտասարդության ներկայիս խնդիրներն ու վիճակը, ինչը կնպաստի այս բնագավառում գիտական մտքի և փորձի համալրմանը: Բացի դրանից, նմանատիպ հետազոտությունները հնարավորություն են տալիս օտարման հիմնահարցը բնութագրել հասարակական-մշակութային տարբեր պայմաններում ու միջավայրերում (Իրանում և Հայաստանում): Հետազոտության համար որպես տեսական հիմք են ծառայել սոցիոլոգիայի և սոցիալական հոգեբանության տարբեր տեսաբանների ու գիտնականների հայեցակարգերը և մոտեցումները:

Սոցիոլոգիական տեսանկյունից նայելով հասարակական հասկացություններին՝ նկատելի է, որ յուրաքանչյուր դարաշրջան ունի իր բարոյական գլխավոր հասկացությունը, որի շուրջ կարողանում է լավագույնս ձևակերպել իր հիմնական խնդիրները: Օրինակ՝ Պրուսական բյուրոկրատ և խստակյաց հասարակարգում ապրող Է. Կանտի համար պարտականությունն էր համարվում կյանքի արգասիքը: Անգլիայի ներքին կռիվների ժամանակաշրջանում ապրող Հոբսի համար գլխավոր իդեալը խաղաղությունն էր, իսկ Բենթամի համար երջանկությունը նշանավորվում էր Անգլիայի միջին խավերի նպատակներով, որոնք ձեռնոց էին նետել կալվածատեր ազնվականների իշխանությանը[8]: Երկար ժամանակ է արդեն, որ մտածողներն ու գիտնականները արդիական մարդուն բնորոշելու համար օգտագործում են օտարացում հասկացությունը:

Ինչպես Էրիկ Ֆրոմն է նշում. «Սեփական ինքնությունից օտարումն այն փորձն է, երբ անձն ինքն իրեն զգում է որպես մի օտար: Կարելի է ասել, որ անձն ինքն իր համար դառնում է օտարական»[9]: Օտարում հասկացությունը որոշ սոցիոլոգների և սոցիալական հոգեբանների կողմից օգտագործվում է հասարակական-քաղաքական պասիվության և անտարբերության բացատրման համար: Եթե օտարումն իր լայն ու ընդարձակ իմաստով համարենք՝ շրջակա իրողություններից անձի տարանջատված լինելու զգացողությունը և հասարակական-մշակութային որոշ իրականությունների հետ նրա մտավոր-կոգնիտիվ և առարկայական-գործնական կապի բացակայությունը, ապա օտարումը

---

[8] **Smith, P.& Robert, M. Bohm**, Beyond anomie: Alienation and crime, Crit Crim, 2008, Vol.16, No.1, PP:1-15.; **Hascher, T. & G. Hagenauer**, Alienation from school // International Journal of Educational Research. 2011, 49, pp. 220-232.

[9] **Erich Fromm**, The Art of Loving. Classics of personal development, Thorsons, 1995, 104 p.

կարող է բազմաթիվ դրսևորումներ ունենալ: Դա է պատճառը, որ Քենտ Քիստոնի և Միչելի կարծիքով՝ օտարման իմաստը սահմանելու համար նախ պետք է հարցնել՝ «Օտարացում ինչի՞ց կամ ումի՞ց», այսինքն ի՞նչն է կամ ո՞վ է օտարման օբյեկտը»[10]:

Եվ այսպես, օտարման խնդիր կամ օբյեկտ կարող են լինել՝ մեկ կամ մի քանի անձինք, բնությունը, աշխատանքն ու արտադրանքը, հասարակությունը և նրա ենթակառուցվածքները (ընտանիք, բանակ, եկեղեցի, քաղաքական ինստիտուտներ), հետևաբար կարելի է օտարման տարբեր տիպեր սահմանել, օրինակ՝ հասարակական ու քաղաքական օտարում, որը մատնանշում է անձի օտարումն ու նրա մտավոր ու գործնական հեռացումը հասարակական որոշ կառույցներից ու ինստիտուտներից[11]: Ինքն իրենից և սեփական ինքնությունից օտարումն իմաստավորվում է այն առումով, որ մենք սկզբից մարդու համար ենթադրում ենք յուրահատկություններ, որոնցով մարդ արարածն առանձնանում է մյուս էակներից: Մարդու գլխավոր առանձնահատկությունն այն է, որ նա ի զորու է փոխել իր միջավայրը: Փոխելով հասարակական միջավայրը՝ փոխվում են նաև մարդիկ: Օտարման սահմանումներից մեկի համաձայն[12]՝ օտարումը տեղի է ունենում այն ժամանակ, երբ մարդու միջոցով ստեղծված հասարակական միջավայրը և հասարակական կառույցները տիրապետում են հենց իրեն՝ մարդուն: Կ. Մարքսը բնութագրելով կապիտալիստական հասարակարգը՝ մի քանի օրինակով նկարագրել է այս իրավիճակը[13]: Նա բացատրել է, թե ինչպես է մարդու կողմից ստեղծված արտադրանքը կանգնում մարդու դիմաց՝ ձեռք բերելով իր արտադրողից առանձին գոյություն: Նման պայմաններում մարդը հեռանում է իր մարդկային հատկանիշներից, մեծանում է մարդկանց միջև տարածությունը:

---

[10] **Մոհսենի Թաբրիզի Ա.,** Վանդալիզմ. վանդալիստական վարքի սոցիալ-հոգեբանական, սոցիոլոգիական և վարքային հոգեբանության հիմքերը սոցիալական պատալոգիայի և դեվիանտ վարքերի քննարկումներում, «Ան» հրատարակչություն, Թեհրան, 2004, էջ 90:

[11] **Պողոսյան Գ.Ա.,** Արդի հայ հասարակությունը XXI դարասկզբին, Եր., , «Լուսաբաց», 2006, 376 էջ:

[12]**Kalekin-Fishman D. ,** Studying alienation: toward a better society?", Cabernets, 2006, Vol.35, No3/4, pp: 522-530.

[13] **Մարքս Կ.,** Տնտեսական ու փիլիսոփայական ձեռագրեր 1844, թարգմանիչ՝ Մորթազավի Հ., «Ագահ» հրատարակչություն, 3-րդ հրատարակություն, Թեհրան, 2003:

Յան Քրայբն այս տեսակ օտարումը բնորոշում է հետևյալ կերպ. «Իրականում, օտարումը՝ անհատների խամաճիկ դառնալն է այն հասարակարգերում, որոնք ստեղծվել են հենց անհատների կողմից»[14]:

Առանց հաշվի առնելու մարդկանց ներկայիս կենսակերպը և սոցիալական ապրելակերպը, հնարավոր չէ վերլուծել ոտարման էությունը, քանի որ այդ հարցում դերակատար են հասարակական, տնտեսական, քաղաքական և մշակութային գործոններ:

Մեր հետազոտությունը նպատակ ունի սոցիոլոգիական տեսանկյունից ուսումնասիրել օտարման երևույթը և նրան ծնող սոցիալական գործոնները երկու երկրներում՝ Իրանում և Հայաստանում, քանի որ սոցիալական շատ խնդիրների ու դժվարությունների արմատները թաքնված են օտարման երևույթում: Մյուս կողմից, յուրաքանչյուր հասարակության համար երիտասարդ-ների խնդիրներն ու դժվարությունները ամենահրատապն ու առաջնայինն են, հետևաբար անհրաժեշտ է հետազոտել օտարման երևույթի սոցիոլոգիական հիմքերը իրանցի և հայաստանցի երիտարարդների շրջանում: Իհարկե,, սոցիալական օտարման հիմնախնդրի ուսումնասիրությունը նոր չէ, սակայն սոցիալական օտարման և նրա վրա ազդող գործոնների քննումը որպես հասկացութային միավորներ, կնպաստի սոցիալական հարաբերութ-յունների մասին նոր մոտեցումների ձևավորմանը: Այդ իսկ պատճառով, մեր հետազոտության մեջ նպատակ ենք դրել որոշարկել հետազոտվող համախմբի (իրանցի և հայաստանցի երիտասարդների) վիճակը սոցիալական օտարման առումով: Այսպիսով, մեր հետազոտության մեջ առաջադրվող գլխավոր հարցադրումը հետևյալն է.

-Իրանցի և հայաստանցի ուսանողները որքանո՞վ են տառապում սոցիալական օտարմամբ և ի՞նչ գործոններ են ազդում դրա վրա:

Սեփական ինքնությունից օտարումն այնքան համատարած երևույթ է դարձել, որ, ասես, այն սկզբիցսեթ մարդկային էության և բնույթի մի մասնիկն է եղել: Երբ անսովոր բանը համատարած է դառնում, սկսում է սովորական թվալ, և առաջանում են անոմիաները: Օտարումը

---

[14] **Քրայբ Յ.,** Դասական սոցիալ տեսություն, թարգմանիչ՝ Մոսամափուր Շ., «Ագահ» հրատարակչություն, Թեհրան, 2000, էջ 254:

պատմության բոլոր ժամանակաշրջանների ամենակարևոր դժվարություններից մեկն է եղել[15]:

Մարդը չի կարող խույս տալ իր մարդկային բնույթից: Եթե նա ձևավորի սոցիալական այնպիսի համակարգ, որը չի համապատասխանում իր բնական պահանջմունքներին, դա կխոչընդոտի մարդու՝ իբրև բանական և անկախ էակի դերակատարմանը, ինչն էլ իր հերթին կհանգեցնի ֆիզիկական ու հոգեբանական ողբերգության[16]:

Օտարման հիմնահարցը և սեփական ինքնության վերականգնման համար մարդու ջանքը նոր խնդիրներ չեն, դրանք միշտ էլ պատմական տարբեր ժամանակահատվածներում և մշակութային տարբեր ենթահողերում ցավ ու տագնապ են պատճառել մարդկանց: Սակայն մեր օրերում այս երևույթը մտահոգիչ փուլ է թևակոխել և ճգնաժամ է կանխատեսում մարդու համար: Ժամանակակից մարդու ամենամեծ գանգատներից մեկն այն է, որ ամբողջապես նյութական առարկաներն ու միջոցները ներթափանցել են մարդու էության խորքերը՝ գերակայություն ստանալով հոգու և խորհուրդի հանդեպ: Մարդու մեքենայացված վարքն ինքնին օտարման նշաններից մեկն է: «Հեգելը նշում է, որ մարդկության պատմությունը նրա օտարման պատմությունն է, թե ինչպես է նա հեռացել իր իսկական բնույթից ու մարդկային խմորից՝ խորտակվելով իր իսկ ձեռքերով սարքած ու ձևավորած սոցիալական համակարգում և հիերարխիայում»[17]: Կ. Մարքսի աշխատություններում բնութագրվել է օտարումն ու նրա սոցիալական հետևանքները[18], այդուհանդերձ հետագա ուսումնասիրություններն առավել փորձարարական մոտեցմամբ անդրադրձան այս երևույթի թաքնված ծալքերին: Օտարման վերաբերյալ հետազոտությունները նոր թափ ստացան, հատակապես, 70-ականներին, բայց դրանից հետո անկում ապրեցին: Շատ մասնագետներ քննադատեցին այս եզրույթի՝ չափազանց լայն առմամբ կիրառումը, նրա օգտագործումն ամեն տեսակի քաղաքական-

---

[15] **Բրանդեն Ն.,** Ինքնօտարման հոգեբանությունը, թարգմանիչ՝ Հաշեմի Ջ., «Էնթեշար» ընկերություն, Թեհրան, 1994, էջ 14:

[16] **Բրանդեն Ն.,** Ինքնօտարման հոգեբանությունը, թարգմանիչ՝ Հաշեմի Ջ., «Էնթեշար» ընկերություն, Թեհրան, 1994, էջ 259:

[17] **Նույն տեղը**, էջ 47:

[18] **Մարքս Կ.,** Տնտեսական ու փիլիսոփայական ձեռագրեր 1844, թարգմանիչ՝ Մորթազավի Հ., «Ագահ» հրատարակչություն, 3-րդ հրատարակություն, Թեհրան, 2003:

հոգեբանական շեղված վարքագծի բացատրման համար, սակայն շարունակեցին մեծ ուշադրություն դարձնել երիտասարդների արտաքին վարքագծերի վրա (թմրանյութերի օգտագործում, փախուստ դպրոցից, հանցագործություններ, ինքնասպանություն), որոնք հիմնականում վերագրվեցին անձի ցածր ինքնագնահատականին, դեպրեսիային և հոգեբանական խնդիրներին:

Իրանցի մասնագետ Ահմադին[19] Շիրազի համալսարանի ուսանողների շրջանում իրականացրած հետազոտության արդյունքում արձանագրել է, որ ուսանողների 55 տոկոսն ունի թերարժեքության զգացում, 39 տոկոսը՝ ցածր ինքնավստահություն, 11 տոկոսը՝ միայնության ընդգծված զգացողություն, 21 տոկոսը՝ սիրո պակաս և 6 տոկոսը՝ ունայնության ու միայնության զգացում:

Իրանի և Հայաստանի հասարակությունների դիտարկումը և առկա պայմանների վերլուծությունը վկայում են՝ վերջին տասնամյակներին աճող լարվածության և խորացող սոցիալական շերտավորման մասին:

Իրանում ցածր է սոցիալական պատասխանատվության մակարդակը, իսկ սոցիալական անտարբերության մակարդակը բարձր է[20]: Երիտասարդներից շատերը անտարբեր են հասարակության մշակութային խրախուսանքների հանդեպ և հեշտությամբ ընդօրինակում են այլ մշակույթների սիմվոլներն ու դրսևորումները: Սա խոսում է օտարման յուրահատուկ ձևի առաջացման մասին, այն է՝ անձի մեկուսացումը հասարակական համակարգից: Քանի որ այս երևույթը լայն տարածում ունի ուսանողների շրջանում, մյուս կողմից՝ օտարման զգացումը սերտորեն կապակցված է սոցիալ-մշակութային և կրոնական մի շարք գործոններին, ուստի մեր հետազոտության արդյունքները կարող են նպաստել հիմնահարցի լուսաբանմանը և օգնել բուհական ղեկավարներին իրենց հետագա ծրագրերը մշակելիս, որպեսզի առավել արդյունավետ քայլեր արվեն ուսանողների կրթական արդյունավետությունը և ուսումնական առաջընթացն ապահովելու համար:

---

[19] **Ամանիսարի Բեգլու Զ., Սեփեհրյանազար Ֆ., Վահեդի Շ.,** Պատանիների ուսումնական օտարման բազմամակարդակ վերլուծություն. դպրոցի մշակույթի դերը և հոգեբանական հիմնային կարիքները, «Կրթօջախների ուսումնառության հետազոտություն» հանդես, 2-րդ տարի, 5-րդ համար, Թեհրան, 2014:

[20] **Բանիֆաթեմեհ Հ., Ռասուլի Զ.,** Սոցիալական օտարման մակարդակի և դրան առնչվող գործոնների ուսումնասիրությունը Թավրիզի համալսարանի ուսանողների շրջանում, «Կիրառական սոցիոլոգիա» հանդես, 22-րդ տարի, 1 (41), 2011, էջ 1-26:

Հետազոտության թեմայի կարևորությունն պայմանավորված է նաև օտարման երևույթի բազմակողմ լինելով և երեք մակարդակների (անհատական, ընտանեկան, հասարակական) վրա ունեցած ազդեցությամբ: Այս երեք մակարդակները թեև առանձին են դիտարկված, սակայն դրանք սերտորեն շաղկապված են միմյանց: Յուրաքանչյուր հատվածում գրանցված ազդեցությունները հարուցում են հետևանքների ամբողջական շարք մյուս հատվածներում: Այլ խոսքով, օտարման ազդեցությունը յուրաքանչյուր մակարդակի վրա փոխանցվում է նաև մյուս մակարդակներին: Անհատական մակար-դակի վրա օտարումը կարող է անձին մղել ինքնասպանության և ինհնահիկիզման, կամ ներգործել մարդկանց ֆիզիկական ու հոգեբանական առողջության և ինքանապաշտպանական մեխանիզմների վրա: Անհատական մակարդակի վրա օտարման ազդեցություններից ու հետևանքներից են նաև անհատի անկախության նվազումն ու վերացումը, այնուհետև նրա ինքնագնահատականի անկումը և ցածր ինքնագնահատական ունենալը: Ինչ վերաբերում է ընտանեկան մակարդակին, ապա պետք է հիշատակել ամուսնալուծությունները և երեխաների հոգեկան առողջության խաթարումը: Հասարակական մակարդակում օտարման ազդեցությունը դրսևորվում է՝ հասարակութ-յան մեջ մարդկային արժեքի անկմամբ, մարդկային առաջնային և հիմնարար իրավունքների ոտնահարմամբ և հետագա սերունդների մոտ խտրականության ու ագրեսիայի ձևավորմամբ:

Մեր հետազոտությունը միտված է նպաստելու օտարման երևույթի արմատների բացահայտմանը, բարձրացնելու հանրային գիտակցութ-յան մակարդակը, խթանելու գիտական միտքը այս ոլորտում և ենթահող պատրաստելու հետագա ուսանողների ու հետազոտողների նոր ուսումնասիրությունների համար:

Մեր նպատակն էր գնահատել սոցիալական օտարման մակարդակն իրանական հասարակության մեջ և այն համեմատել հայ հասարակութ-յան հետ:

Ելնելով վերը նշված գլխավոր նպատակից՝ մենք առաջադրել ենք մի քանի խնդիրներ. 1.Օտարման տարբեր տիպերի բնութագրումը Իրանի և Հայաստանի ուսանողների շրջանում: 2.Սոցիալական օտարման վրա ազդող գործոնների բացահայտումը և նկարագրությունը՝ ըստ մի շարք փոփոխականների (տարիք, սեռ, աշխատանք և այլն): 3.Սոցիալական

օտարման վրա յուրաքանչյուր գործոնի ազդեցության մակարդակի գնահատում:

Այսպիսով, հետազոտության շրջանակում փորձ է արվել քննելով օտարման վերաբերյալ տեսությունները և առաջադրելով հասկացութային սահմանումներ՝ տարբեր տեսանկյուններից, վերլուծել երևույթի պատճառները և ձևերը, դիտարկել տարբեր սոցիոլոգների և տեսաբանների մոտեցումները սոցիալական օտարման արմատների և գործոնների մասին: Հետազոտությունը տեսականորեն հիմնավորում է սոցիալական օտարման երևույթի տարբեր կողմերն ու շերտերը, դրա դրսևորումներն ու արտահայտությունները մշակութային ու հասարակական տարբեր միջավայրերում: Մենք այն կարծիքին ենք, որ երիտասարդների խնդիրների, մոտեցումների, մոտիվացիաների, սպասելիքների և կարիքների ուսումնասիրությունը կարող է նպաստել բարձրագույն կրթության ոլորտի և երիտասարդության հարցերի պլանավորողներին՝ առավել արդյունավետ ծրագրեր մշակելու գործում: Հետազոտությունը վեր է հանում երիտասարդության շրջանում առկա դժվարությունները, բացերը և թերացումները, որոնց կրճատումը կխթանի հասարակության կայուն զարգացումը: Ստացված արդյունքները կարող են կիրառվել երիտասարդության հարցերին և կրթական ոլորտին առնչվող աշխատանաքներում ու ծրագրերում:

Սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական ու տեղեկատվական-հեռահաղորդակցության սրընթաց փոփոխությունների, ինչպես նաև արժեքային համակարգի ու նորմերի տեղաշարժերի պայմաններում մարդ արարածն ապրում է օտարման երևույթի բացասական հետևանքներն ու վնասները: Օտարումը բազմակողմ ու բազմաշերտ երևույթ է, որի պատճառներն ու արմատները ներառում են սոցիալ-տնտեսական, մշակութային, հոգեբանական ու սոցիոլոգիական մի շարք գործոնների համալիր ազդեցությունները:

Բարոյական սկզբունքների խաթարումը, հուզազգացական կապերի թուլացումը, միայնությունը, թմրամիջոցների օգտագործման տարածվածությունը, կախվածությունը ալկոհոլից, սոցիալական շեղումները, մեկուսացումը, ունայնության զգացողությունը, ինքնասպանությունների թվի աճը, հոգեկան հիվանդների թվաքանակի մեծացումը և այլն, բոլորն էլ այս կամ այն կերպով առնչվում են օտարման երևույթի հետ:

Իրանը և Հայաստանը որպես տարածաշրջանի զարգացող երկրներ, որոնք ունեն պատմական հնամենի անցյալ, մշակութային հարուստ ժառանգություն, սեփական ինքնության պահպանման ու զարգացման և կենսունակ նոր սերունդ ունենալու խնդիր, օտարման երևույթը դիմագրավելու և նրա բացասական հետևանքները սահմանափակելու համար, պետք է արդյունավետորեն հարմարվելով նոր ժամանակների փոփոխություններին և հենվելով իրենց արժեքային համակարգերին ու ավանդույթներին՝ առաջադրեն ավանդականի ու արդիականի, անհատականի ու հասարակականի, անձի և հանրության համադրության սեփական ձևերն ու մոդելները:

Ուսանողները՝ որպես հասարակության ապագան կերտող կարևոր խավ և զարգացման գործընթացի խթանիչ ինտելեկտուալ ներուժ, զերծ չեն օտարման երևույթի հետևանքներից, որոնք վնասում նաև հասարակությանը և խոչընդոտում նրա համաչափ զարգացումը: Հետևաբար ուսանողների շրջանում օտարման արմատների ու պատճառների ուսումնասիրությունն ու հայտնաբերումը կենսական անհրաժեշտություն է Հայաստանի ու Իրանի համար և կարող է նպաստել հասարակության առաջընթացին:

Հետազոտության տարբեր փուլերում կիրառվել են հետևյալ մեթոդները՝ մասնագիտական դիտարկում, սոցոլոգիական հարցում և անկետավորում, ստացված արդյունքների համեմատություն, տվյալների խմբավորում և համակարգչային-մաթեմատիկական մշակում և վերլուծություն: Նման հետազոտությունները կարող են քաղաքական ղեկավարության ուշադրությունը սևեռել օտարման հարցի վրա և նրանց հիշեցնել արդյունավետ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացված են Իրանի և Հայաստանի սոցիալական համակարգերում սոցիալական օտարման երևույթի համեմատական ուսումնասիրության արդյունքները: Մասնավորապես, ուսանողների շրջանում իրականացրել ենք սոցիոլոգիական ուսումնասիրություն, որի նպատակն էր բացահայտել երկու երկրների ուսանողների շրջանում սոցիալական օտարման երևույթը տարբերություններն ու ընդհանրությունները: Ուսանողները, որպես հատուկ սոցիալական շերտ, որը ստեղծում է հասարակության ապագան և զարգացման

գործընթացի բազմակողմանի մտավոր ներուժը, իր հերթին, նույնպես զերծ չեն օտարման երևույթի հետևանքներից, ինչը վնաս է հասցնում հասարակությանը, ինչպես նաև կանխում դրա համաչափ զարգացումը: Այսպիսով, ուսանողների շրջանում օտարման արմատների և պատճառների ուսումնասիրությունն ու նույնականա-ցումը կարևոր խնդիր է Հայաստանի և Իրանի համար և կարող է նպաստել հասարակության առաջընթացին:

Բանալի բառեր. սոցիալական օտարում, ուսանողություն, բարոյական սկզբունքներ, հուզական կապեր:

СОЦИАЛЬНОЕ ОТЧУЖДЕНИЕ В ИРАНСКОМ И АРМЯНСКОМ ОБЩЕСТВАХ

Реза Имами
Аспирант Института философии, социологии и права НАН РА

РЕЗЮМЕ

В статье приводятся результаты сравнительного изучение феномена социального отчуждения в социальных системах Ирана и Армении. В частности, мы провели социологическое исследование среди студенчества и попытались выявить различия и сходства в явлении социального отчуждения среди студенческой молодежи обеих стран. Студенты, как особый социальный слой, создающий будущее общества и всесторонний интеллектуальный потенциал процесса развития, в свою очередь также не свободны от последствий явления отчуждения, которое наносит ущерб обществу, а также препятствует его пропорциональному развитию. Таким образом, изучение и выявление корней и причин отчуждения среди студентов является жизненно важной задачей для Армении и Ирана и может способствовать прогрессу общества.

Ключевые слова: социальное отчуждение, студенты, моральные принципы, эмоциональные связи

SOCIAL ALIENATION IN IRANIAN AND ARMENIAN SOCIETIES

Reza Emami
PhD student at the Institute of Philosophy, Sociology and Law of NAS RA

SUMMARY

The article presents the results of the comparative sociological study of the phenomenon of social alienation in the societies of Iran and Armenia. In particular, we conducted a sociological survey among the students and sought to find out the distinguish and similarities in social alienation phenomena

between the community of student youth of both countries. Students, as a special social strata, who creates the future of the society and the inclusive intellectual potential of the development process, are also not free from the effects of the phenomenon of alienation that hurt society as well as hinder its proportional development. Therefore, the study and discovery of roots and causes of alienation among the students is a vital necessity for Armenia and Iran and can contribute to the progress of the society.
Keywords. social alienation, students, moral principles, emotional connections

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՐԹԱ-ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿՈՂՊԵՐԱՏԻՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻ

Սյուզաննա Եղիազարյան
Խ. Աբովյանի անվ. Հայկական Պետական մանկավարժական համալսարանի Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի դասախոս

Զբաղվածությունը, առհասարակ, անձի հասարակական օգտավետ գործունեության կազմակերպումն է[1], ինչն էլ անպայմանորեն ենթադրում է խորաթափանց հայացք գցելն այդ գործունեության որակը ապահովող սկզբունքների՝ ուսանողների կրթության մակարդակի և այդ գործընթացում նրանց կիրառած ջանքերը պիտանի ուղղվածությամբ նպատակաուղղելու վրա։

Կրթության համակարգն, առհասարակ, իրենից ներկայացնում է կրթական չափորոշիչների, կրթության հաջորդականությունն ապահովող կրթական ծրագրերի (հանրակրթական և մասնագիտական), ուսումնական հաստատությունների և կրթության կառավարման փոխկապակցված ամբողջություն։ Հիմնական մասնագիտական կրթական ծրագրերը լինում են նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական։ Արդեն իսկ այս համակարգի նկարագրությունից բխում է, որ զուտ բուհական մակարդակի ջանքերով կրթության բոլոր հիմնախնդիրների լուծումն անհնարին է, որովհետև դրանք մասամբ դուրս են բուհական համակարգից կամ

[1]Տե՛ս **Калина Н.М.**, Феномен трудовой занятости студентов в России: история и современность // Проблемы современной экономики, Евразийский международный научно-аналитический журнал. 2017, №2., С. 222